

ՓԱՐՒԶԻ ՄԵՋ «ՇԱՐԼԻ ԷՊՏՕ»-Ի ՆԱԽԿԻՆ ԽՄԱԲԱՐԱՏԱՆ ՍՕՏ ԴԱՆԱԿՈՎ ՅԱՐԶԱՎՈՒՄ

Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մեջ ֆրանսական «Շարլի Էպտո» երգի-ծական ամսագրի խմբագրության նախկին շեփոհ մօտ անյայտ անձ մը դա-նակով յարձակում գործեց անցորդներու վրայ:

Յարձակումին պատճառով վիրաբույժացու չորս անձեր: Ոստիկանութիւնը շրջափակեց թաղամասը եւ ձերբակալեց երկու կասկածելիներ:

Յայտնի է, որ «Շարլի Էպտո»-ն ամբողջական սկիզբը դարձեալ հրապարակած էր Մոհամետ մարգարէի վիճաբարոյ ծաղրանկարները, որոնց պատճառով խմբագրութեան աշխատակիցները սպառնալիքներ ստացած են:

Ֆրանսայի ընդհանուր դատախազութիւնը յայտարարեց, որ ստանձնած է յարձակումին հետաքննութիւնը՝ նշելով, որ հետաքննութիւն ձեռնարկած է «ա-հաբեկչական արարքի առնչուած մահափորձ»-ին եւ «ահաբեկչական քրեա-կան միութեան» շուրջ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՆԱԿԱՆ ՄԱՐԶԵՐՈՒ ՎԻՃԱԿԻՆ ՇԵՇՏՈՒՈՂ ՎԱՏԹԱՐԱՅՄԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՔՈՒԼԻՍԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ



Կառավարութեան կազմութեան մարտահրաւերը երկէ դարձեալ առանցքը կազմեց տարուող քաղա-քական ճիգերուն, ուր հրամայական պահանջ դար-ձած էր նոր կառավարութեան կազմութեան իրագոր-ծումը՝ նախքան փոխանցուած ժամկետներու աւար-տը: Արդարեւ, նշանակելով վարչապետ Մուստաֆա Ատիպ, մեկէ աւելի ժամկետներու միջեւ կը փորձէ կառավարական յարմարագոյն տարազով ներկայա-նալ լիբանանցիներուն: Այս ծիրին մէջ, մէկ ձեռքին հրաժարականը, միւս ձեռքին կառավարութեան կազմերու տարբեր սեւագիրները՝ Ատիպ երկէ երկու անգամ, առաւօտեան եւ յետմիջօրէին, այցելեց Պապատայի պալատ, առանց սակայն գործնական շօշափելի արդիւնքի, եւ ձեռնուկով վերադարձաւ, նոր ժամկետ խոստանալով այսօր, շաբաթ կէսօրէ ա-ռաջ ժամը 11:00-ին՝ ներկայացնելու իր ցանկը կամ հրաժարելու: Փաստօրէն, նախկին վարչապետ Նե-ժիպ Սիբաթի երկէ երեկոյեան յայտնեց, թէ գիշեր-ան ընթացքին սերտ ճիգեր եւ խորհրդակցութիւն-ներ պիտի կայանան, եւ եթէ այսօր մերժուի Ատիպի ներկայացնելիք կառավարութեան ցանկը՝ ան պիտի հրաժարի: Այլ խօսքով, ուրբաթէն շաբաթ լուսող զիշերուան ընթացքին կայացած մարաթոնային խորհրդակցութիւնները պիտի վճռեն կառավարու-թեան ճակատագիրը, որուն գծով գրեթէ բոլոր կող-մերը համամիտ են դրական արդիւնքի յանգելու, յատկապէս՝ նախկին վարչապետ Սաստ Յարիրիի նախաձեռնութեան լոյսին տակ:

Շար.Պ՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱԿ-Ի ԸՆԳՂՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ. «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԵՆԱՅ ԱՄԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐՈՒ ՈՐՈՇԵԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ»



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ ունեցաւ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 75-րդ նստա-շրջանի ընդհանուր քննարկումներուն ընթացքին եւ անդրադարձաւ յատկապէս դարաբաղեան տագ-նապին եւ թուրքիոյ վարած քաղաքականութեան:

Փաշինեան իր խօսքին մէջ լուսարձակի տակ ա-ռաւ մերթոյն հիմնական մարտահրաւերը՝ «Զորո-նա» համավարակը, որ մեծ ազդեցութիւն ունի Շար.Պ՝ էջ 2

ԲԱՅՏԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 250 ՄԻԼԻՈՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՍԿԻ ԿԸ ՆՈՒԻՐԷ ՀԱՔ-ԻՆ

Հայ աւետարանական քրիստոնէական եկեղեցիի Մա-նուկեան, շարունակելով իր ազնիւ յանձնառու-թիւնը դպրոցին հանդէպ եւ հաստատելով անոր քրիստոնէական ու ազգային առաքելութեան, յաւելեալ 250 միլիոն լիբանանեան ոսկիի նուի-րատուութեամբ կը հոգայ 100 աշակերտի կըր-թանապատը 2020-2021 տարեշրջանին:

Ընդհանուրութիւն կը յայտնեց մեծարգոյ բարերարին, որ միշտ կը շարունակէ մսալ ՀԱՔ-ի կողքին՝ սատարելով անոր 98-ամեայ երթին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ԵՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԳՆԱՅ ԱՐԵՑ. ԶՈՒՆԵԾԻ


ԻՐԱՆԻ ՄԵՋ ԴԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՆՏԵՐՈՒ ԴԵՍ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Միացեալ Նահանգներ իրա-նական շարք մը կառոյցներու եւ իրանցի անձնաւորութիւններու դէմ պատժամիջոցներ հաստա-տեց՝ մարդու իրաւունքներու խախտման համար: Ամերիկեան պատժամիջոցներու ենթարկ-ւածներուն շարքին է դատաւոր մը, որ առնչուած է իրանցի ըմբ-շամարտիկի դատին, որուն ընթացքին ան դատապարտ-ւած է մահապատիժի:

Միացեալ Նահանգներու ար-տաքին գործոց նախարար Մայք Փոմպեո յայտնեց, որ պատժամիջոց-ներ հաստատուած են դատաւորներ սեյիտ Մահմուտ Սատաթիի եւ Մոհա-մետ Սուլեյմանիի դէմ, ինչպէս նաեւ Շիրազի յեղափոխական դատարանի առաջին մասնաճիւղին ու Ատեյա-պատ, Ուրմիա եւ Ուաքիլապատ բան-տերուն դէմ:

Իրանի եւ Վենեզուելայի հարցով Միացեալ Նահանգներու յատուկ ներ-կայացուցիչ Էլիզաբէթ Արարաճ իր կար-գին յայտնեց, որ պատժամիջոցները թիրախ դարձուցած են դատաւոր մը, որ մահապատիժի դատապարտած է իրանցի ըմբշամարտիկ Նուսրէթ Աֆշար-ին, որ այս ամիս մահապատիժի են-թարկուեցաւ 2018 թուականի բողոքի ցոյցերուն ընթացքին ապահովութեան աշխատակից մը դանակով զոհուելու սպան-նելուն համար:

Յիշեցնենք, որ Միացեալ Նահանգ-



ներ քանի մը օր առաջ նոր պատժա-միջոցներ հաստատուած էին Իրանի պաշտպանութեան նախարարութեան եւ Իրանի հիւլեական ծրագրի մաս-նակիցներու դէմ: Ուաշինկթըն այդ քայլին դիմած էր Իրանի դէմ ՄԱԿ-ի պատժամիջոցները ինքնագլուխ վե-րականգնելու իր որոշումը յայտարա-րելէն ետք:

Նախքան այդ, Միացեալ Նահանգ-ներ ձայնակած էին այդ պատժամի-ջոցներուն վերականգնումը ապահո-վել ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուր-դին մէջ:

Ֆրանսայի արտաքին գործոց նա-խարարութիւնը յայտարարեց, թէ այս շաբթուան ընթացքին իր մօտ կանչած է Փարիզի մէջ Իրանի դեսպանը, եւ բողոքած Իրանի մէջ մարդու իրաւունք-ներու «վտանգաւոր ու շարունա-կական» խախտումներուն դէմ:

ՄԱԿ-Ի 75-ՐԴ ՆՏԱՇՐՋԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԱԼԻԵ ԻՐ ՏԵՍԱՈՒՂԵՐԸ ՆՈՒՐԱՎ Ե ԶԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՑԵՆԻ ԱՆԻՄՆ ՄԵՐԱԴՐԱՆՔՆԵՐ ՀՆՁԵՑՆԵԼՈՒ

Ազրայէճանի նախագահը դարձեալ դժգոհած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախա-գահներէ՝ ՄԱԿ-ի 75-րդ նստա-շրջանին ընդհանուր բանալեճե-րու ժամանակ ունեցած ծաւա-լուն տեսաուղերը նուիրելով Հայաստանը եւ Հայաստանի իշխանութիւնները քննադատե-լուն ու դարձեալ անհիմն մեղադ-րանքներ հնչեցնելուն: Այս մա-սին կը հաղորդէ «Երկիր Մետիա»-ն:

«ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համա-նախագահ երկիրները՝ Ֆրանսան, Ռուսիան եւ Միացեալ Նահանգները իրենց յայտարարութիւններուն մէջ ընդգծած են, թէ սթաթիս պոն անըն-դունելի է: Մենք կ'ողջունենք այդ յայ-տարարութիւնները, սակայն անոնք բաւարար չեն: Զայլեր պետք են», ըսած է Ալիե՝ անելցնելով, որ Մինսքի խմբա-կի անդամ բոլոր 11 երկիրները պետք է աշխուժ կերպով ներգրուուած ըլլան



դարաբաղեան տագնապի լուծման հո-լովոյթին մէջ՝ հաւանաբար նկատի ունենալով Թուրքիան, որ կը շարունա-կէ իրավիճակը ապակայունացնող իր դիրքորոշումն ու անվերապահ աջակ-ցութիւնը կը յայտնէ Ազրայէճանին:

Ալիե նաեւ Հայաստանը մեղադրած է ահաբեկչութեան աջակցելու, մարդու իրաւունքները խախտելու, միջազգա-յին մակարդակով դրամ լուսալու յան-ցանքներով, մեղադրանքներ, որոնք լուսազոյն կը բնորոշեն ինքնին Ազրա-յէճանը:

ՖՐԻՏՄԸՆ. «ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՍՏԱՏՕՐԵՆ ԴԵՊԻ ԵԱՐԱՔԱՑԻԱԿԱՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՍ Կ'ՈՐԴՈՒՆ ԹՐԱՄՓ ՅԱՅՏԱԿ Ե, ԹԷ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՈՎ ՊԻՏԻ ՀԱՄԱՁԱՅՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂ ՓՈՒՍԱՆՑԱՆ

Միացեալ Նահանգ-ներու նախագահ Տա-նըլտ Թրամփ նախա-գահի պաշտօնը խա-ղաղ ճամբով պիտի լքէ միայն այն պարագա-յին, երբ նախագահա-կան ընտրութեան ըն-թացքին պարտուի Դե-մոկրատական կուսակ-ցութեան թեկնածու Ծօ Պայլընտ, ինչ որ պի-տի հաստատէ Գերա-զոյն դատարանը: Այս մասին ան յայ-տարարած է: «Ֆոքս Նիւզ»-ի հետ զոյգուր ընթացքին:



«Այդ պարագային ես համաձայն պիտի ըլլամ Գերազոյն դատարանի ո-րոշումին հետ: Սակայն ես կը կարծեմ, թէ մինչեւ հոն հասնիլը մենք տակաւին երկար ճամբք ունինք», ըսած է գոր-ծող նախագահը:

Թրամփ նախապէս մամլոյ ասուլի-սի ժամանակ մերժած էր նախագա-

հական ընտրութեան ընթացքին իր պարտու-թեան պարագային Ե-րաշխարհէն երկրին մէջ խաղաղ իշխանա-փոխութիւն:

«Եկէք տեսնենք, թէ ինչ տեղի պիտի ունե-նայ: Ես արդէն ըսած եմ, որ նամակատան ճամբով քուէարկութիւ-նը աղէտ է», ըսած էր Թրամփ՝ պատասխա-նելով համապատասխան հարցումին:

Սպիտակ տան ղեկավարը նոյն ատեն վստահութիւն յայտնած էր, թէ պիտի յաղթէ:

«Իշխանութեան որքէ յանձնուժ պիտի ըլլայ, պիտի ըլլայ շարունա-կութիւն», անելցուցած էր ան:

Միացեալ Նահանգներու մէջ նա-խագահական ընտրութիւնը նախա-տեսուած է 3 նոյեմբերին:

Շար.Պ՝ էջ 3

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԸ ԿԱԼԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՒ



«Արմէնփրես» կը տեղեկացնէ, թէ երկէ երեկոյեան Երեւանի ընդհանուր իրաւատութեան դատարանը՝ նախագահող դատաւոր Մնացական Մարտիրոս-եանի գլխավորութեամբ, բաւարարեց «Քարգաւած Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանը կալանաւորելու վերաբերեալ Ազգային անվտանգութեան ծառայութեան քննիչի միջնորդու-թիւնը: Այս մասին յայտնեցին անոր պաշտպանները: Ծառուկեան երկու ամիս պիտի մնայ կալանքի տակ:

ՀՅԳ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻՆ ԵՒ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՒԹ ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՅՏՆՈՒԾ ԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵՋ

ՀՅԳ Ֆրանսայի Հայ դատի յանձնախումբին նախաձեռնութեամբ թուրք ազգայնական-ները յայտնուած են դատարանին մէջ:

Իրադարձութիւնը մեկնաբանած են ՀՅԳ Բիւրոյի անդամ, Ֆրանս-այի հայկական կազ-մակերպութիւններու համակարգող խոր-հուրդի համանախա-գահ Մուրատ Փափագեանը եւ Ֆրանսայի ՀՅԳ Հայ դատի յանձնախումբի նախագահ ժուլ Պոյաճեանը:



«Ամեն զեթիւնը վտանգաւոր լծակ է Երոտողանին համար, շատ վտանգաւոր խօսքեր արտայայտեց, եւ Հայ դատի յանձնախումբը որոշեց դատի կանչել գինը, փաստաբան վարձեց, եւ արդարադատու-թիւնը արդէն ընթացքի մէջ է», նշած է Մուրատ Փափագեանը:

ՆԱԽԱԳԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ՊԱՔՈՒՆ ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԶԻ ԿՐՆԱՐ ԸԵՂԵԼ ԻՐ ԸՆՏՐԱԾ ԾԱՄԲԱՅԵՆ»

Պաքուի՝ դարաբաղեան տագնապը սրող յայտա-րարութիւնները ոչ մէկ պարագայի Արցախի ժողո-վորը կրկին շեղել իր ընտրած ճամբայէ: Այս մա-սին նշեց Արցախի նախագահ Արայիկ Յարութիւն-եան՝ 25 սեպտեմբերին տեղի ունեցած աշխատան-քային ընդլայնուած խորհրդակցութեան օրակարգային

Շար.Պ՝ էջ 2

ԲԷԿ-Ի, ՀՅԳ-Ի ՈՒ «ՀԱՅՐԵՆԻԲ»-Ի ԲՈՂՈՔՆԵՐՈՒ ՔՐՆՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱԶԳՈՒԹԵԱՒ

ԲՀԿ, ՀՅԳ եւ «Հայրենիք» կուսակցութիւններու աշխատանքային խումբը կը հաղորդէ, թէ երկէ՝ ուր-բաթ, 25 սեպտեմբերին, երեկոյեան ժամը 5:00-ին Երեւան քաղաքի առաջին ատենի ընդհանուր իրա-ւատութեան դատարանի Շեքաւիթի նստավայրին մէջ, «Հայրենիք» կուսակցութեան խորհուրդի ան-դամ Արսէն Բաբայեանի, ՀՅԳ-ի ներկայացուցիչ Լի-լիթ Գալստեանի եւ ԲՀԿ-ի ներկայացուցիչ Նայիրա Չոհրապեանի կողմէ ներկայացուած բողոքներու քննութիւնը յետաձգուեցաւ՝ աշխատանքային ժամու աւարտին պատճառով:

Շար.Պ՝ էջ 2

ԵՐՈՒԱՆԻ ԽՈՒՆԿԱՐԵԱՆԸ ԶԷ ԸՆՏՐՈՒԾ ՄԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԿ

Սահմանադրական դատարանի նախագահի թեկ-նածու Երուանդ Խունկարեանը չէ ընտրուած Սահ-մանադրական դատարանի նախագահի պաշտօնին: Ըստ «Արմէնփրես»-ին, այս մասին լրագրողներուն

Շար.Պ՝ էջ 2

ԱՆՆԱԿԵՆՆԵԱՅ ՄՐՅԱՆԻՇ ԿՏՐԵԼՈՎ՝ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՐՐԸ ԿԸ ՎԱՐԱԿԵ 1143 ՊԱՐԱԳԱՅ ԵՒ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ ՉՈՐՍ ՄԱՅ



Անցնող փետրուարին ի վեր նախընթաց մը կազմելով «Քորոնա» ժահրը երկն արձանագրեց 1143 պարագայ Լիբանանի մէջ եւ պատճառեց 4 մահ: Ինչպէս որ սաստկացող վարակի այս երեւոյթը գորշարժի մատնեց պատկան մարմինները: Արդարեւ, կրթական վերամուտի միջոցով 12 հոկտեմբեր յետաձգուելու ետք, լիբանանեան գանազան շրջաններու (Քուպայայթ, Արամուս...) քաղաքապետութիւնները որոշեցին ինքնակամ կերպով ու տարբեր ժամանակով փակել իրենց շրջանները եւ խստացնել կանխարգելիչ միջոցառումները:

ՆԱԵՒ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԲԱՆՏԵՐՈՒ ՄԵՋ

Համավարակը թափանցած է նաեւ լիբանանեան գանազան բանտեր: Այս պատճառով բանտարկեալներու ընտանեկան պարագաներ երկն փակեցին Ռումիէի թէ Չահլէի բանտեր առաջնորդող ճամբաները՝ պահանջելով անմիջական լուծում գտնել իրենց հարազատներու փրկութեան համար՝ համաւերում շնորհելով անոնց: Ըստ Ռումիէի արգելափակեալներու ծնողներուն, 250 բանտարկեալ վարակուած է Ռումիէի արգելարանի տարբեր բաժանումներուն մէջ:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ՏԻՐՈՂ տնտեսական ու առողջապահական մտահոգիչ կացութեան դէմ իբրեւ բողոք կարգ մը ճամբաներ փակուեցան երկն լիբանանեան տարբեր շրջաններու մէջ, ինչպէս՝ Պեքայի Տահր Պայտարի մայրուղին, Պեյրութի Մարգարան աւան-Քոլա բոլորակի եւ այլ բանուկ փողոցներ:
- ԼԻՔԱՆԱՆԵԱՆ բանակը երկն հաղորդագրութեամբ մը յայտնեց, թէ Չղարթայի Հիլան շրջանին մէջ ձերբակալուած է վերջերս պատահած Զաֆթունի ոճիրի յանցագործներէն Ահմետ Սամիր Շամիր: Նշենք, որ Զաֆթունի ոճիրին զոհ գացած էին շրջանէ երեք լիբանանցիներ եւ աւելի ու՛շ՝ լիբանանեան բանակի գաղտնի սպասարկութեան չորս անդամներ: Յանցագործը ապաստանած էր կառուցման ընթացքի մէջ եղող շէնքի մը մէջ՝ ձեռքին ձեռնառումը մը, առանց կարենալ գործածելու գայլ:
- ԵՐԵՎ ԿԵՏՈՐԷ Ետք Պեյրութի միջազգային օդակայան հասաւ Ֆիլիպին կղզիներու դիւանագիտական մէկ պատուիրակութիւնը՝ իրեն հետ բերելով տասնեակ թռչողներու բանակութեամբ բժշկական, դեղորայքի եւ սննդեղէնի օժանդակութիւն Լիբանանի կարիքաւորներուն: Պատուիրակութիւնը դիմաորուեցաւ Ֆիլիպին կղզիներու դեսպանին եւ բարձրաստիճան պատասխանատուներու կողմէ:
- ՊԵՃԱՎՅԻ սեփական մարզի վարժարաններու համախմբումը երկն հաղորդագրութեամբ մը պետական պատկան մարմիններէն պահանջեց պետական վարժարաններու կողքին հոգատարութիւն ցուցաբերել նաեւ Պեքայի սեփական մարզի վարժարաններուն նկատմամբ: Հաղորդագրութիւնը յատկապէս շեշտեց խոստացուած նիւթական օժանդակութեանց եւ առողջապահական սարքերու փոխանցումին կարեւորութիւնը դիմակալել կարենալու համար «Քորոնա» ժահրին վտանգը:

ԲԿՎ-Ի, ՀՅԳ-Ի ՈՒ «ՀԱՅՐԵՆԻԲ»-Ի...

Շարունակուած Ա. Էջն

30 յունիսին «Հայրենիք»-ը, ԲՀԿ-ն եւ ՀՅԳ-ն իշխանութեան իրացման եւ սահմանադրական կարգի տապալման դեպքերու առիթով յանցագործութեան մասին հաղորդում ներկայացուցած էին Հայաստանի Յատուկ քննչական ծառայութիւն: Վերջինս, սակայն, մերժած էր քրեական գործի յարուցումը: Յանցագործութեան մասին քաղաքական երեք ուժերու հաղորդման հիման վրայ քրեական գործի յարուցումը մերժած էր նաեւ դատախազութիւնը, որուն յաջորդած էր կուսակցութիւններու ներկայացուցիչներու բողոքը առաջին ատենակի դատարան: Յիշեցնենք, որ գործը կը վերաբերի Սահմանադրութեան ապօրինի փոփոխութեան ընթացքին թոյլ տրուած բազմաթիւ յանցագործութիւններուն:

ԵՐՈՒՆԳ ԽՈՒՆԳԿԱՐԵԱՆԸ

Շարունակուած Ա. Էջն

հետ գրոյցի մը ընթացքին կը տեղեկացնէ Սահմանադրական դատարանի նորընտիր դատաւոր Էտկար Շաթիրեան: «Քանի որ առաջադրուած միակ թեկնածուն էր եւ ընտրուելու համար անհրաժեշտ թիւով կողմ ձայներ չէ ստացած, ան չէ ընտրուած», ըսաւ Շաթիրեան:

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱՉԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-Ի հետ կապուելու համար
հեռաձայնել հետեւեալ թիւերուն.-
(01)258526, (01)260115 եւ (01)241274:

ՈՂՋՈՒՆԵԼՈՎ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՆԱԿԱԶԵՆՈՒԹԻՒՆԸ՝

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿԸ ՉԳՈՒՇԱՅՆԵՆ. «ԿԱՑՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ ԵՒ ՄԱՅՈՒ ՄԻՋԵՒ Է»

Լիբանանեան տնտեսական շրջանակներ, յատկապէս՝ Պեյրութի եւ Լեռնալիբանանի խորհուրդներու պատասխանատուները երկն ժողով մը գումարեցին՝ նախագահութեամբ նախկին նախարար Մուհամետ Շքէյրի, եւ քննեցին երկրի տնտեսական հեռզեղումը վատթարացող իրավիճակը՝ տիրող քաղաքական թէ ելեմտական անկայատ պայմաններու լոյսին տակ: Ժողովակալները հաղորդագրութեամբ մը պատկան պատասխանատուներէն պահանջեցին օգտուիլ ընձեռնուող յատկապէս արտաքին կողմերու (օրինակ՝ Ֆրանսայի) առիթներէն եւ փութալու կառավարութեան կազմութեան:



«Կացութիւնը այս անգամ տարբեր է, կենաց եւ մահու միջեւ է, եւ պէտք է շուտափոյթ լուծման յանգիլ», շեշտեցին ժողովակալները իրենց հաղորդագրութեան մէջ: Հաղորդագրութիւնը այս առիթով ողջունեց Ֆրանսայի նախաձեռնած փրկարար ճիգերը, թելադրելով առիթը չփախցնել եւ ընդառաջել Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի կոչներուն: Հաղորդագրութիւնը խոստովանեց իր անկարողութիւնը կառավարութեան շուտափոյթ կազմութիւնն եւ բարեկարգումներու իրագործման փութացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱԿ-Ի...

Շարունակուած Ա. Էջն

մարդկային կեանքի բոլոր ոլորտներուն մէջ, եւ շեշտեց, որ մարտահրաւերները լուծելու համար անհրաժեշտ է, որ բոլոր պետութիւնները վերադառնան արդիւնաւետ բազմակողմանիութեան եւ միջազգային համագործակցութեան դաշտ՝ ՄԱԿ-ի հովանիին տակ:

Ան վերահաստատեց Հայաստանի միանշանակ աջակցութիւնը ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղարին՝ համաշխարհային զինադադար հաստատելու կոչին եւ «Քորոնա»-ի վերաբերելով ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 2532 բանաձեռին, որ կը պահանջէ մարտական գործողութիւններու ընդհանուր եւ անյապաղ դադարեցում բոլոր իրավիճակներուն մէջ:

Այս ծիրին մէջ ան անդրադարձաւ այն իրողութեան, որ, հակառակ այս ժախրին դէմ մղուող համաշխարհային քայքային, տակաւին կայունութեան սպառնացող փորձեր կան՝ յիշելով յուլիսին Ազրայէճանի ձեռնարկած հերթական յարձակողական գործողութիւնը Տաւրիշի մարզին ուղղութեամբ: Վարչապետ Փաշինեան մանրամասնութիւններ տուաւ այս մասին՝ Նշելով, որ Հայաստան շուտով կոչ ուղղեց լաւածուութեան թուլացման, այդուհանդերձ Ազրայէճան շարունակեց գետնի վրայ իր գործողութիւնները, իսկ Ազրայէճանի իշխանութիւններն ալ աւելի սաստկացուցին իրենց ռազմաշունչ հռետորաբանութիւնը՝ հատելով քաղաքակիրթ պատկերացումներու բոլոր սահմանները:

«Յուլիսեան մարտերն ի դերէ հանեցին Ազրայէճանի ռազմական գերազանցութեան մասին առասպելը եւ հաստատեցին, որ դարաբաղեան տագնապ ռազմական լուծում չունի: Ազրայէճանի ղեկավարութեան համար շատուց հասունացած է այդ փաստը ընդունելու անհրաժեշտութիւնը, ուստի անոնք պէտք է հիմնուած ըլլալ Լեռնային Ղարաբաղի ուժի գործադրումէն եւ սպառնալիքներէ՝ բանակցութիւններու միջոցով տագնապի խաղաղ լուծման շրջագիծին մէջ», յայտնեց Նիկոլ Փաշինեան:

Սն շեշտեց, որ Հայաստան կը վերանայտուէ Լեռնային Ղարաբաղի տագնապի բացառապէս խաղաղ լուծման իր հաւատարմութիւնը՝ դիտել տալով, որ խաղաղութեան գործընթացը պէտք է հիմնուած ըլլալ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին վրայ, որ ճանչցուած է միջազգային հանրութեան եւ միջազգային միջնորդներու, յատկապէս ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համախաղաքակցութեան կողմէ: «Այս իրաւունքի ուժով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պէտք է կարենայ առանց սահմանափակումներու որոշել իր կարգավիճակը: Այդ իսկ պատճառով, նրանց ընտրած իշխանութիւնները պէտք է կարենան մասնակցիլ բանակցութիւններուն: Տագնապի գոտիին մէջ բնակող մարդոց խնդիրներն ու կարիքները պէտք է դառնան բանակցութիւններու օրակարգի գերակայութիւնը», դիտել տուաւ ան:

Ըստ անոր, Հայաստանի համար այլ առանցքային գերակայութիւն է անվտանգութեան գոյարարական սպառնալիքներու ենթարկուող Արցախի ժողովուրդին եւ հայաստանի անվտանգութեան:

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏ ՀՈՍԱՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ



Ազգային ազատ հոսանք կուսակցութեան փոխնախագահ, նախկին նախարար Թարեք Խաթաբ երկն պատուիրակութիւն մը գլխաւորելով այցելեց Լիբանանի մէջ սուրիական դեսպանատան նստավայրը՝ Եարզէի մէջ, ուր տեսակցեցաւ դեսպան Ալի Ապտէլ Զեյիմ Ալիի հետ: Խորհրդակցութեանց առանցքը կազմեց Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ յարաբերութեան վերաշխուժացումը՝ տիրող տեղական թէ շրջանային իրադարձութիւններու լոյսին տակ:

Ազգային ազատ հոսանք կուսակցութեան նախագահ, նախկին նախարար Ժարան Պասիլի կողմէ առաջուած պատուիրակութիւնը այս առիթով շեշտեց Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ յարաբերութեան եւ համերաշխութեան կարեւորութիւնն ու նպաստը՝ ի շահ երկու երկիրներուն: Իր կարգին, դեսպան Ալի ողջունեց Սուրիոյ եւ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան միջեւ համերաշխ գործակցութիւնը եւ երկու երկիրներու բանակներուն միատեղ ճակատումը ընդդէմ ահաբեկչութեան ու երկու պետութեանց սպառնացող վտանգներուն:

ՔՈՒԼԻՍԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ...

Շարունակուած Ա. Էջն

ՆԱԵՒ՝ ԱՐՏԱԶԻՆ ՊԵՐՈՒՄԵՐ

Լիբանանի կառավարութեան կազմութիւնը հրամայական անհրաժեշտութիւն կը նկատուի նաեւ արտաքին կողմերու համար, որոնք նոյնպէս քուլիսային խորհրդակցութիւններով կ'ուզեն փութացնել այս խիստ կարեւոր մարտահրաւերը: Մարտահրաւեր, որ հակառակ պարագային կը սպառնայ նոյնիսկ երկրի գոյութեան, ինչպէս գաւառացուած էր օրին Ֆրանսա: Արդարեւ, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն մայրուկ կապի մէջ է լիբանանեան պատկան կողմերու ներկայացուցիչներուն հետ՝ թախանձակ թելադրելով փութացնել կառավարութեան կազմութիւնը, «նախքան ուշ ըլլալը»: Խորքին մէջ, շրջանային քաղաքական իր հետանկարներու իրագործման կողքին Ֆրանսա նաեւ ջատագով է Լիբանանի յատկապէս տնտեսական վերանվանումին եւ այս գծով ան խոստացած է «Սետր»-ի թէ այլ ծրագիրներու ֆինանսաւորումը՝ փոխարեւը պահանջելով խոստացուած բարեկարգումներուն իրագործումը: Հոսկէ՛ Ֆրանսայի վճռական կեցուածքը նշանակալի վարչապետի առաքելութեան դիրքացման գծով եւ անոր մերժողական կեցուածքը Ատիպի հրաժարման հաւանականութեան առնչութեամբ:

ԱՊՐՈՒՍԻ ՄԱՐԸ՝ ԱՅԱՉԱՆԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ ՄԵՋ

Արդարեւ, տեղական առումով լիբանանցիք գաւառական շրջաններու մէջ բողոքի ձայներ բարձրացուցին՝ պահանջելով հրատապ հարցերու լուծման բանակի քայլ նկատուող կառավարութեան շուտափոյթ կազմութիւնը: Փաստօրէն, ապրուստի եւ տնտեսական պայմանները հեռզեղումը կը վատթարացնէ կարգ մը սննդեղէններու սակագիներու յաւելման մասին տեղեկութիւններու լոյսին տակ: Նմանապէս, ելեմտական իմաստով Հեռքուտակական դրամատան նիւթական գորակցութեան վերացման «խոստում»-ի լոյսին տակ կարգ մը տնտեսագետներու «մեկնաբանութիւնները» կը գուժեն լիբանանեան թղթակցի յաւելումը արժեզրկուող: Աւելին, նշեալ գորակցութեան վերացման կիրարկումով մտավախութիւնները կը սաստկանան յատկապէս վառելիքի թէ ելեկտրածին շարժակներու բաժնեգիներուն գծով, որոնք, ըստ նշեալ տնտեսագետներուն՝ կրնան հասնիլ մինչեւ մէկ միլիոն լիբանանեան ոսկիի սահմանը: Կարգ մը վաճառականներ ստիպուած եղած են իրենց կանաչեղէնները, բանջարեղէններն ու պտուղները հատավաճառով սպառելու՝ տրուած ըլլալով, որ լիբանանցիք անկարող են սովորական կշռոյթի սակագինը վճարելու:

Նմանապէս, «Քորոնա» ժահրի համաճարակին սաստկացումն ու տարածումը առաւել եւս կը մտահոգէ լիբանանցիները կրթական վերամուտի սեմին, եւ ծնողներ շուարած են գրեական պիտոյքներու սղաճին եւ առողջապահական վտանգին միջեւ՝ իրենց գաւակներու կրթական ճակատագիրին գծով:

ՆԱԿԱԳՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ՊԱՔՈՒՆ...»

Շարունակուած Ա. Էջն

հարցերու քննարկման անցնելու առաջ հանդէս գալով քաղաքական յայտարարութեամբ: Ան նշեց, որ վերջին ժամանակներուն յաճախակի դարձած են պաշտօնական Պաքուի՝ տագնապը լարող յայտարարութիւնները, որոնք, սակայն, ոչ մէկ պարագայի Արցախի ժողովուրդը կարող շեղել իր ընտրած ուղիէն: Նախագահ Յարութեանին համաձայն, թշնամիին կողմէ կատարուած որեւէ սպորտային պարագային պաշտպանութեան բանակը պատրաստ է պատուով դուրս գալու իրավիճակէն՝ թշնամիին կրկին պարտադրելով խաղաղութիւն:

«ԱԶԳԱԿ»-Ի ԱՐԱՔԵՐԵՆ ԿԱՅԲԷԶԸ
www.aztagarabic.com

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՐՆԵՐ

«ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԶԱՎԱՏՈՎ ՈՒ ՆՈՒԻՐՈՒՄՈՎ»

Կ'ԸՆԵ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Թեմերուն հետ ունեցած իր առցանց խորհրդակցություններուն առընթեր, վեհափառ հայրապետը անցնող օրերու ընթացքին նաեւ առանձին հանդիպումներ ունեցաւ թեմերուն մէջ ծառայող եւ համալսարաններուն մէջ ուսանող միաբան հայրերու հետ:

Վեհափառ հայրապետը վանաբնակ միաբաններուն հետ յաճախակի առիթներով առանձնաբար եւ հաւաքաբար հանդիպումներ կ'ունենայ, կը լսէ զիրենց, իրենց յանձնուած աշխատանքներուն մասին զեկուցումներ կը ստանայ եւ իր հայրական օրհնությունը եւ թելադրութիւնը կը կատարէ անոնց:

Թեմերու մէջ ծառայող միաբաններուն հետ ունեցած առցանց զրոյցներու ընթացքին վեհափառ հայրապետը մտնէ տեղեակ դարձաւ անոնց աշխատանքներուն, ինչպէս նաեւ ուսումնական աշխատանքներուն մասին, գնահատեց անոնց հաւատքով ու նուիրումով կատարուող ծառայութիւնը եւ անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց: Վեհափառ հայրապետը թելադրեց առաւել թափ տալ անոնց ժողովրդաւոր ծառայութեան՝ յիշեցնելով, որ հայ հոգեւորականին մեծութիւնը, արժէքն ու արժանիքը միայն ծառայութիւնն է:

Յայտնենք, որ թեմական ծառայութեան մէջ զըտնուող միաբաններէն ոմանք նաեւ կ'ուսանին, ինչպէս նաեւ ամբողջութեամբ ուսման նուիրուած միաբաններ կան Դոմի, Աստրախոյ, Զանաւայի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Յառաջիկայ կրթական տարեշրջանին նաեւ ուսանողներ պիտի ըլլան Լիբանանի համալսարաններուն մէջ: Յառաջիկայ ամիսներուն ոմանք պիտի վերադառնան թեմական ծառայութենէն, իսկ ուրիշներ պիտի մեկնին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԴՊՏԻ ԶԱՍՏԱՅՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ



Երկուշաբթի, 21 սեպտեմբեր 2020-ին, Պիքֆայայի Ա. Աստուածածին վանքին մէջ, Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Լիբանանի մէջ ղապտի համայնքի առաջնորդ հայր Դիմոնը:

Հանդիպման ընթացքին առաջնորդ հայր սուրբը ղապտի եկեղեցւոյ պէտ Թեոդորոս պապին եղբայրական ողջոյնները փոխանցեց վեհափառ հայրապետին: Այս առիթով, ան նաեւ բացատրութիւններ ու տեղեկութիւններ տուաւ վեհափառ հայրապետին՝ Լիբանանի մէջ ղապտի համայնքին մասին: Վեհափառ հայրապետը, իր կարգին, իր եղբայրական ողջոյնները փոխանցեց Թեոդորոս պապին եւ հայր սուրբին յաջողութիւն մաղթեց իր նոր առաքելութեան մէջ:

Հանդիպման աւարտին, առաջնորդ հայր սուրբը Թեոդորոս պապին կողմէ սրբապատկեր-յուշանուէր մը յանձնեց վեհափառ հայրապետին, իսկ վեհափառ հայրապետը՝ հայկական խաչ:

Յայտնենք, որ նոր առաջնորդը ծանօթ է միջեկեղեցական ու միջընտանական յարաբերութեանց եւ Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին մէջ լայն գործունեութիւն ունեցած է:

ԹՐԱՄՓ ՅԱՅՏՆԱԾ Է...

Շարունակուած Ա. էջէն

Միւս կողմէ, ամերիկեան ակաւաւոր գրող եւ քաղաքական վերլուծաբան Թամսոն Ֆրիտմըն «Մի.Էն.Էն.»-ի հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ Միացեալ Նահանգներ հաստատուելու դէպք քաղաքացիական երկրորդ պատերազմ կ'ունենայ՝ աւելցնելով, որ այն, ինչ որ վերջերս Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցաւ, կը նմանի Լիբանանի մէջ քաղաքացիական պատերազմէն առաջ տեղի ունեցածին:

Ան նշեց, որ այն, ինչ որ ներկայիս տեղի կ'ունենայ, աներեւակայելի է: Ըստ անոր, Հանրապետական կուսակցութիւնը աշխուժօրէն աշխատանք կը տանի երկիրը դէպի քաղաքացիական պատերազմ տանելու, երբ Թրամփի պարտութեան պարագային ընտրութեան արդիւնքին օրինակաւորութիւնը նախապէս կը խլէ:

Ֆրիտմըն ըսաւ, որ քաղաքացիական պատերազմէն միակ փրկութիւնը թերեւս Թրամփի երկրորդ նստաշրջան մը ապահովելը կրնայ ըլլալ:

ԱԶԴ

Լիբանանի հայոց թեմի Դատաստանական խորհուրդը, 18 սեպտեմբեր 2020 թուականին, արձակեց պարոն **Շակոբ Մարտիրոս Նաքաշեան**ի եւ տիկին **Թանիա Պերոն Զեօշկերեան**ի ամուսնալուծման դիմումին վերաբերեալ թիւ 16/20 վճիռը:

Սոյն կողմագիրը համագործ է վճիռի հաղորդման, որով այս օրուականէն սկսեալ, երթակները ունին 40 օր՝ իբրեւ վերադատ ատենանի դիմելու ժամանակամիջոց:

Յուշարկուն մանրամասնութիւններ ստանալու համար կը խնդրուի դիմել Ազգային առաջնորդարանի Դատաստանական խորհուրդի գրասենեակ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ՅԵՏԵՈՐՈՆԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ. ՀԱՅԵԱՑԸ՝ ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱՅԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ «ՔՈՐՈՆԱ»-Ի ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱՅԻ ԱՌԱՋ ՔԱՅԼԵՐՈՒՆ

Ինչպէս տեսանք 14 մայիս 2020-ին «Ազգակ»-ի մէջ լոյս տեսած «Քորոնա» ժաիրի մարտահրաւերի դիմակայում. Յառաջդիմականներու եւ պահպանողականներու մտտեցումներու բաղադրական խորագիրով յուշածին մէջ, Նոր Չելանտան, դիմագրաւելու համար «Քորոնա» ժաիրի համավարակին մարտահրաւերը, որդեգրեց խթանիչ փաթեթ, յատկացնելով 500 միլիոն նորգելանտական տոլար (304.149.940 միլիոն ամերիկեան տոլար)՝ ներդրում կատարեց առողջապահական մարզին մէջ, 126 միլիոն նորգելանտական տոլար (մօտաւորապէս 76.645.784 միլիոն ամերիկեան տոլար) ապահովեց վճարովի արձակուրդներուն համար, 2,8 միլիարդ նորգելանտական տոլար (1.703.239.664 միլիարդ ամերիկեան տոլար) յատկացուց կարիքաւոր ընտանիքներուն, 6,25 միլիարդ նորգելանտական տոլար (3.801.874.250 միլիարդ ամերիկեան տոլար) ապահովեց միջին ու փոքր ձեռնարկութիւններուն, 27 միլիոն նորգելանտական տոլար (մօտաւորապէս 16.424.096 միլիոն ամերիկեան տոլար) ապահովեց ընկերային ծառայութիւն մատուցող կերտներուն:



Նելուն իբրեւ հետեւանք աճած է ընտանեկան բռնութիւնը կիներուն նկատմամբ եւ շրջաններուն մէջ ձեռնարկութիւններու սնանկացման վտանգ կայ, հետեւաբար կառավարութիւնը տրամադրեց 665,3 միլիոն նորգելանտական տոլար (440,154 միլիոն ամերիկեան տոլար)՝ ընկերային ծառայութիւններուն մէջ ներառելով տնային բռնութեան դէմ պայքարը, գիւղերու մէջ պետական եւ ոչ կառավարական կազմակերպութիւններու կողմէ ծառայութիւններու մատչելիութեան պահպանումը:

Նոր Չելանտան «Տնտեսական համագործակցութեան եւ զարգացման կազմակերպութեան» (OECD) մէջ բարձր ցուցանիշներ ունեցող պետութիւններէն մէկն է: Հետեւաբար, Նկատի առնելով այս կետը եւ նպատակ ունենալով պահել Նոր Չելանտայի կրթական համակարգին բարձր ցուցանիշները, ինչպէս նաեւ հիմք ունենալով աշակերտութիւնը ձեռքբաւելու առաջնութենէն եւ քաջալերել փախստական ու գաղթական աշակերտները, կառավարութիւնը ներդրեց 813,6 միլիոն նորգելանտական տոլար (539,06 միլիոն ամերիկեան տոլար)՝ ներառելով նախնական կրթութիւնը, համալսարանները, արուեստից եւ արհեստագիտական դպրոցները, անգլերէն դասաւանդելու դպրոցները, ուսուցիչներու աշխատավարձի բարձրացումը:

Համաշխարհային մակարդակի վրայ, ճարտարարուեստի հատուածը մեծ վնաս կրեց առողջապահական մեկուսացումի դրութենէ՝ արտադրութեան եւ առեւտրական աշխատանքներուն ժամանակակից կանգնեցումին պատճառով: Աշխարհով մէկ արդէն իսկ յետքորտային տնտեսական վերականգնումը կը նախատեսենք. Նոր Չելանտան իր կարգին 443,7 միլիոն նոր գելանտական տոլար (298,89 միլիոն ամերիկեան տոլար) յատկացուց գիւղատնտեսական ճարտարարուեստի, ձկնորսութեան եւ անտառաշինարարութեան:

Ի վերջոյ այսօրուան աշխարհի հիմնական սիւները կը կազմեն ցանցերը: Նոր Չելանտայի կառավարութիւնը, յատկացնելով 246,8 միլիոն նորգելանտական տոլար (166,25 միլիոն ամերիկեան տոլար) մշակութային եւ արուեստի մարզերուն, կապած կ'ըլլայ թե՛ Նոր Չելանտայի աւանդական բնիկ մուտրի եւ գաղթականներու բազմաշակոյթ երթիւնը եւ թե՛ այլ արդի լսատեսողական ճարտարարուեստը՝ անոր մէջ ներառելով լրատուամիջոցները, վաւերագրութիւնները, ժապաւենները, ծայրասփիւռի եւ պատկերասփիւռի կայանները, Նշաններու լեզուն եւ տեղեկատուական արուեստագիտութիւնը:

ՇԵՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Նոր Չելանտայի կերտն-ձախ Աշխատաւորական կուսակցութեան առաջադրած թե՛ խթանիչ փաթեթի քաղաքականութենէն եւ թե՛ այլ 2020-ի պիտոնէն կ'եզրակացնենք հետեւեալ կետերը:

Ա.- Նոր Չելանտայի Աշխատաւորական կուսակցութիւնը, դաւանելով ընկերավար-ժողովրդավարական գաղափարախօսութիւնը, փաստեց, որ տակաւին ճգնաժամերու ընթացքին ընկերավար-ժողովրդավարները կրնան լուծումներ գտնել եւ միջազգայնօրէն տիրապ օրինակ դառնալ:

Բ.- Բէյնզակականութիւնը (անգլիացի տնտեսագետ ճոն Մայնրոտ Բէյնզի տնտեսական տեսութիւնը), որ հիմնուած է շուկայի հսկողութեան եւ պետութեան միջամտութեան վրայ, ո՛չ միայն առկայ է, այլ նաեւ գործադրելի է՝ փրկելու համար տնտեսութիւնները շուկայի ծախողութիւններէն ու զանազան ճգնաժամերէ: Մենք այս իրականութեան ականատես դարձանք «Քորոնա»-ի համավարակին պարտադրած առողջապահական մեկուսացումի ժամանակաշրջանին կառավարութիւններուն որդեգրած խթանիչ փաթեթի քաղաքականութիւններէն:

Գ.- Աշխատաւորականները վերանորոգեցին իրենց գիրենք Նոր Նիւթը (աւանդական Նիւթերուն կողքին) Նկատի ունենալով իբրեւ առաջնահերթութիւն, ինչպէս՝ ընտանեկան բռնութեան դիմագրաւումը, հաշմանդամներուն կարելիութիւններու մատուցումը, բնապահպանութիւնն ու տեղեկատուական արուեստագիտութիւնը:

ՆԱԹԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ ԼՈՅՍԸ

Ատենէ մը ի վեր կը փորձեն նստիլ գրասեղանիս առջեւ եւ համարժեք միջոցներ՝ թուրքիս յանձնելու համար գանտնք, մտածելով ընդհանրապէս ազգը յուզող հարցերու եւ ի մասնաւորի լիբանանահայ գաղութի վերաբերող հրատարակ հարցերու մասին, որովհետեւ ես գաւակն եմ այդ գաղութին, հակառակ անոր որ երկար տարիներէ ի վեր հոն չեմ բնակիր, բայց անկարող կերպով գրիչս վար կը դնեմ:

Անշուշտ պատճառը յուսահատութիւնն ու յուսաբեկումն է, որ կը պատեն Լիբանանի հորիզոնը: Կարծես անվերջանալի հողմապտոյտի կամ փորթրիկի մէջ ըլլանք քաղաքական-տնտեսական իմաստով, իրավիճակ մը, որուն վերջը չենք տեսներ:

Կը կարեկցիմ սիրելի գաղութիս գաւակներուն, որոնք հարուած հարուածի ետեւէ ստանալով կը հիւծին, կը մաշին եւ դժբախտաբար քանդուի կ'առաջնորդուին:

Քաղաքական խլրտում, տնտեսական անկայունութիւն, «Քորոնա» ժաիրի համավարակ, պատերազմի արձագանքներ, եւ տակաւին ի՞նչ...

Քաղաքական վերլուծում չէ, որ կ'ուզեմ կատարել. պարզապէս կը փորձեմ ցուլ, կակիծը, մորմոքը եւ վիշտը բաժնել իմ լիբանանահայ անգին քոյրերուն եւ եղբայրներուն հետ:

Յարգանք, պատկասանք եւ խոնարհութիւն բոլոր ազգային կազմակերպութիւններուն, կուսակցութիւններուն, խմբակցութիւններուն եւ նուիրատու անձնաւորութիւններուն, որոնք ճիգ չխնայեցին լիբանանահայութեան վիշտը ամօքելու՝ այս ոճովակ պայմաններու մէջ:

Այս դժուար ու խորին պայմաններուն մէջ է, որ «իսկական» մարդը՝ օժտուած հոգեկան բիրտը արժեքներով, ծառայաւոր, նուիրեալ, մէկ խօսքով՝ գլխագիր մարդը կը գանազանուի այլ մարդոցմէ՝ դառնալով լոյսը իր շրջապատին: «Դուք եք աշխարհին լոյսը», կ'ըսէ Աստուածաշունչը (Մտթ. 5:14):

Երբ մարդկութիւնը կը դատարկուի իր բարոյական արժեքներէն, երբ մայրուն արժեքները կ'անտեսուին ու գնալուները կը գնահատուին եւ երբ մութ ամպերը կը պատեն մեր հոգեկան աշխարհը՝ դո՛ւք եղէք լոյսը ձեր շրջապատին: Հո՛ս է, որ պետք է ցոյց տանք քրիստոնեւորութեան մեր հասկացողութիւնը: Այժմ կ'ուզեմ մէքերել Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի խորախորհուրդ խօսքերէն մէկը. «Իրաւ քրիստոնեայ մարդուն համար կենսըը համակ սեր է, ինքնընծայում, ամբողջանում եւ անսակարկ ծառայութիւն՝ Աստուծոյ, մարդկութեան, քրիստոնեական արժեքներուն եւ սկզբունքներուն»:

Մեր պատմութեան էջերը եղած են լեցուն լուսաւոր դէմքերով, որոնք ամէնէն դաճան եւ անհարթ օրերուն լուսաւորած են իրենց շրջապատը:

Երբ հոգեկան արժեքներու գահավիժումը կ'ընդհանրանայ, եւ թափանցիկ ու անտարբեր Նայուածքները կը բազմապատկուին, մարդկութիւնը կը դատարկուի քրիստոնեական պատգամէ, եւ թըշառուութիւնն ու վիշտը կը շրջապատեն բոլորը, պէտք է դառնանք ջահակիրներ, պէտք է դառնանք լոյսը այս մութ աշխարհին:

ՏՈՔԸ. ՎԱՐԴԱՅ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

ԼՈՒԻՉՎԻԼԻ ՄԵՋ 2-ԲԳ ՕՐԸ ԱՆԸՆԳՄԵՋ ՑՈՅՑԵՐ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ ՍԵՒԱՄՈՐԹ ԿՆՈՋ ՍՊՈՐՏԻՎՈՒԹԵԱՆ ԴԷՄ



Միացեալ Նահանգներու Զենթաքի Նահանգի Լուիզիոն քաղաքին եւ Երկրի այլ շրջաններուն մէջ ցուցարարները դարձեալ փողոց դուրս եկած են այս տարուան մարտին բնակարանային ձերբակալութեան ժամանակ ոստիկանութեան անյաջող գործողութեան պատճառով գնդակահարուած սեւամորթ Պրեմա Պեյլորի գործով դատարանի որոշումի հրապարակումէն ետք: Այս մասին կը հաղորդէ «Կարտիզ»-ը:

Հասարակութեան զայրոյթը դարձեալ սաստկացած է դատարանի որոշումէն ետք, որուն համաձայն, Պրիոնա Թեյլորի սպանութեան համար ոչ մէկ ոստիկանի մեղադրանք պիտի առաջադրուի:

Կը նշուի, որ Լուիզիոն քաղաքին մէջ լարւածութիւնը հետզհետէ կ'աճի. չորեքշաբթի երեկոյեան խաղաղ ցոյցերը վերածուած են բռնութեան, բողոքի ցոյցի ժամանակ արձակուած կրակոցներէն վիրաւորուած են երկու ոստիկաններ: Նահանգի իշխանութիւնները ցոյցի մասնակիցները ցրուելու համար դիմած են Ազգային պահակազուկի ուժերու օգնութեան:

Ափրիկեան ծագումով ամերիկացի Պրեմա Թեյլորի անունը վանկարկող հազարաւոր ցուցարարներ յայտարարած են, որ իրենց պայքարը կը շարունակուի, մինչեւ որ արդարութիւնը հաստատուի եւ մեղաւորները արժանի պատիժ ստանան:

Կը նշուի, որ ցոյցեր տեղի ունեցած են Լաեա Նիւ Եորքի, Ֆիլադելֆիոյ, Սեյնթ Լուիսի, Պալմօքի եւ այլ քաղաքներու մէջ:

Շտապօգնութեան 26 տարեկան աշխատակից Թեյլորը սպանուած է 13 մարտին, երբ Լուիզիոն ոստիկանութիւնը ներխուժած է անոր տունը: Դատարարը ոստիկաններէն պահանջած էր ուսումնասիրել թմրեցուցիչներու առնչուած գործը քաղաքի այլ վայրի այլ բնակարանի մէջ: Ոստիկանները դատարարին ըսած էին, որ, իրենց կարծիքով, թմրեցուցիչի վաճառքի համար կասկածուող տղամարդոցմէն մէկը Թեյլորի բնակարանը կ'օգտագործէր փախութէտներ ստանալու համար:

50-Է ԱՆԵԼԻ ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ՔՈՆԿՐԵՍԻ ԳՐԱԳԱՐԱՆԻՆ ԿՈՋ ԿՈՒՂՂԵՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ» ԽՈՐԱԳԻՐԻՆ ՓՈԽԱՐԷՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՂԱՆՈՒԹԻՒՆ» ԵԶՐԻ ՏԱԿ



Միացեալ Նահանգներու Զնկրեսի Ներկայացուցիչներու տան աւելի քան 50 անդամներ միացած են քննարկական Տինա Թայթի Նախաձեռնութեան, որով Զնկրեսի գրադարանին կը կ'ուղղուի Հայոց ցեղասպանութեան վերաբերող նիւթերը դասակարգել պատշաճ կերպով՝ «Հայկական կոտորածներ» խորագիրին փոխարէն ամրագրելով «Հայոց ցեղասպանութիւն» եզրը եւ համապատասխան նիւթերը ներկայացնել այդ անուն տակ:

Զնկրեսականի այս դիմումը կը հիմնադրուի այն բանով, որ Նախորդ տարի Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան որդեգրած թիւ 296 եւ Շերակոյտի հաստատած թիւ 150 բանաձեւերով ճանչցուած է Հայոց ցեղասպանութիւնը: «Շնորհակալ եմ քննարկական Թայթիին այս Նախաձեռնութիւնը սկզբունքայնօրէն ղեկավարելու համար, մեր գոհունակութիւնը կը յայտնենք բոլոր անոնց, որոնք ջանքեր կը գործադրեն Զնկրեսի եւ աշխարհի այլ գրադարաններուն մէջ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ գրականութեան պատշաճ ներկայացման ուղղութեամբ», նշուած է Ամերիկայի հայկական ազգային համագումարի հրապարակած հաղորդագրութեան մէջ:

www.lokh-arcl.org

ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԶՈՐԵԱ ՆԵՐՈՒՄ ԿԸ ՀԱՅՅԵ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԶՈՐԵԱՅԻ «ԴԱՍԱԼԻԶ» ՊԱՇՏՈՆԱՏԱՐԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հիւսիսային Զորեայի ղեկավար Զիմ Եոնկ Ուն Ներում հայցեց Հարաւային Զորեայի քաղաքացիի ծովուն մէջ սպանութեան համար: Այս մասին կը հաղորդէ հարաւային զորեական «Եոնկափ» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Հարաւային Զորեայի Նախագահի գրասենեակին:



Հարաւային զորեական գաղտնի սպասարկութեան աղբիւր մը յայտնեց, որ Հարաւային Զորեայի ձկնորսութեան Նախարարութեան պաշտօնատար մը փորձած է դասալիք ըլլալ: Աղբիւրը նշեց, թէ տեղեկահաւաքի իշխանութիւնները լրտեսութեան ու հեղուկութեան ճամբով փաստեր ստացած են Հիւսիսային Զորեայի հետ հաղորդակցութիւններու մասին, եւ փաստերը ցոյց կու տան, թէ 47 տարեկան պաշտօնատարը փորձած է դասալիք

ըլլալով միանալ Հիւսիսային Զորեայի: Աղբիւրը աւելցուց, որ գաղտնի սպասարկական տեղեկութիւնները ամբողջութեամբ նկատի ունենալով տեղեկահաւաքի իշխանութիւնները կը կարծեն, որ նշեալ պաշտօնատարը Հիւսիսային Զորեա մեկնած է անոր միաձայն համար: Ան ըսաւ, որ տեղեկութիւնները, որոնք ցոյց կու տան, թէ ան փորձած է հիւսիս փախչիլ, հաւաստի են, որքան այն տեղեկութիւնը, թէ Հիւսիսային Զորեան կրակ բացած է անոր վրայ, ապա դիակը հրկիզած: Պաշտօնատարին ընտանիքն ու գործընկերները սակայն կը պնդեն, թէ Հիւսիսային Զորեա ապաստանելու որեւէ նշան չկար:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍԱԶՐՈՆ-ՓՈՒԹԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՅԱՐՈՅՑ ԱՐՏԱՀՈՍՔԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՆՈՒԹԵԱՆ ՍԿԱՍԸ Ե

Ֆրանսայի իշխանութիւնները պաշտօնական հետաքննութեան սկսած են Նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ Ռուսիոյ Նախագահ Վլադիմիր Փութինի հեռաձայնային հաղորդակցութեան աղմուկայրոյց արտահոսքին շուրջ: Այս մասին կը հաղորդէ ռուսական ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Ֆրանսայի արտաքին գործոց Նախարարութեան յայտարարութեան:



«Ներքին գաղտնի փաստաթուղթերու որեւէ արտահոսք թոյլատրելի չէ: Այս պատճառով մենք զերծ պիտի մնանք մեկնաբանութիւններէ: Այժմ կը կատարուի քննութիւն», նշած է արտաքին գործոց Նախարարութեան բանբերը: Նախապէս Զեմլինի բանբեր Տիլթրի Փեքսը յայտարարած էր, որ Էլիզաբէթ պալատը չէր կրնար գիտակցաբար, դիւանագիտական արժեքափերու խախտումով, լրատուամիջոցներուն փոխանցել Ռուսիոյ եւ Ֆրանսայի Նախագահներու զրոյցին ձայնագրութիւնը:

Փեքսը յիշեցուցած է. «Պերլինեան հիւանդի (Ալեքսէյ Նաւալնիի) նիւթը իսկապէս քննարկուած է Փութինի եւ Մաքրոնի վերջերս ունեցած զրոյցի ընթացքին, եւ Զեմլինի տեղեկացուցած է այդ մասին»: «Միեւնոյն ժամանակ, դէպքը երբեք ճշգրիտ ձեւով չէ ներկայացուած ձեւակերպումներու մէջ: Եւ արդարութեան համար պէտք է նշել, որ դժուար թէ կարենար ճշգրիտ ըլլալ, որովհետեւ ատիկա պիտի նշանակէր, որ մեր Ֆրանսացի գործընկերները դիմումը լրատուամիջոցներուն փոխանցած են երկու Նախագահներու զրոյցի ձայնագրութիւնը, որ չի համապատասխաներ դիւանագիտական գործնականութեան: Համոզուած եմ, որ ատիկա այդպէս չէ», ընդգծած է Փեքսը: Անոր համաձայն, Զեմլինի միտքէն լոյսնակ չի կրնար անցնիլ, որ Ֆրանսայի իշխանութիւններէն դէպի լրատուամիջոցներ կրնար ղեկավարներու խօսակցութեան բովանդակութեան «արտահոսք» ըլլալ: Յիշեցնենք, որ Ֆրանսական «Էր Մոնտ» օրաթերթը Նախապէս հաղորդած էր, որ Փութին Մաքրոնի հետ զրոյցի ընթացքին չէր բացառած, որ ռուս ընդդիմադիր գործիչ Ալեքսէյ Նաւալնիին ինք թոյն խմած է: Անոր իբրեւ պատաս-

ԸՍՏ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ

ՈՒԱՇԻՆԿՈՐԸ ՃՆՆՈՒՄ ԿԸ ԲԱՆԵՑՆԵ ԶԱԹԱՐԻ ԿՐԱՅ, ՈՐՊԵՍՉԻ ԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆՈՆԱՑՆԵ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ

Իսրայելեան լրատուամիջոցներ հաղորդած են, թէ Արաբական ծոցէն կողմէր իսրայելեան «Զան» ձայնասփիւռի կայանին յայտնած են, որ ամերիկեան ճնշումներ կը բանեցուն Զաթարի վրայ, որպէսզի ընդունի պաշտօնապէս իր յարաբերութիւնները բնականոնացնելու Իսրայելի հետ, որուն դիմաց ՄԵՆՈՒՄԿԱՆ Արաբիոյ, Եգիպտոսի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Պահլէյնի կողմէ անոր դէմ հաստատուած պայքարը պիտի ջնջուի: Այս մասին կը հաղորդէ «Մայաթին» արբանեակային պատկերասփիւռի կայանը:

Ըստ լրատուամիջոցներուն, Զաթար մինչեւ հիմա կը մերժէ երկու հարցերը իրարու կապել: Ծոցի շրջանէն այլ կողմէր իսրայելեան ձայնասփիւռի կայանին յայտնած են, թէ Զաթար կը վախճայ, որ Իսրայելի հետ հրապարակաւ յարաբերութիւններու բնականոնացումը կրնայ վնասել պաղեստինեան շրջանակներուն մօտ իր վարկին: Զաթարի արտաքին գործոց Նախարարութեան բանբեր Լուլուա Խաթեր քանի մը օր առաջ յայտնած էր, թէ իր երկիրը պիտի չմիանայ Ծոցի երկիրներուն Իսրայելի հետ յարաբերութիւններու հաստատման ջայլին, մինչեւ պաղեստինեացիներու հետ տագնապին լուծումը:

«ՌՈՒՄԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՍԱՆԻԹԻ ԴԵՍ ՊԱՏՈՒԻՐՈՒԹ ԱՐՇԱՒԸ ԱՆՆԱԿԱՐԴԵՊ ԾԱՒԱԼՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՅ» Կ'ԸՍԷ ԶԱՆԱՐԿԱԿ

Գիտական քննարկումին փոխարէն որոշ երկիրներ կը թաւալեն անախադէպ ծաւալներով պատկերուած արշաւ ընդդէմ «Զորոնա» ժաիրին դէմ ռուսական պատուաստանիւթին: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին Ռուսիոյ Դաշնակցային խորհուրդին մէջ տեղի ունեցած «Համաճարակային տեղեկատուական պատերազմները ժամանակակից աշխարհին մէջ եզրակացութիւններ Ռուսիոյ համար» նիւթով կրոր սեղանի ժամանակ յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա: Ան մասնաւորաբար նշած է. «Տեղի ունեցած է մեր բժշկական յաջողութիւններու կտրուկ բացասական լուսաբանում, ներառեալ «Զորոնա» ժաիրին դէմ պատուաստանիւթի մշակման հարցին մէջ: Հիմա ատիկա կը ստանայ անախադէպ ծաւալներ: Գիտական առողջ բանաձեւի փոխարէն կը տեսնենք 20-րդ դարու չէմ գիտեր որ թուականներու ոգիով պատուիրուած արշաւներ»:

Զախարովայի աւելցուցած է, որ ռուսական մշակման արդիւնաւետութեան վերաբերեալ փորձագիտական հասարակութեան կասկածները լայնօրէն կը տարածեն, օրինակ, զերմանական լրատուամիջոցները:

ԱԶՐՊԵՅՃԱՆ Զ'ԱՐՏՈՆԵՐ ԿՐԱՑԱՀԱՅԵՐՈՒՆ ՊԱՏԱՆՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԻՐ ՏԱՐԱԾԵԻՆ ՃԱՄԲՈՎ ՍՏՑՆԵԼ ԿՐԱՍՏԱՆ

Ազրպէյճան որոշած է չարտօնել, որ վրացահայերուն պատկանող ապրանքները ազրպէյճանական տարածքէն փոխադրուին Կրաստան: Այս մասին կը հաղորդէ ռուսական «Ինֆորմէյշն 24» կայքը՝ նշելով, որ վրացական «Կզանիլի» բեռնափոխադրող ընկերութիւնը իր պաշտօնական կայքին վրայ յայտարարութիւն հրապարակած է այն մասին, որ Պաքոյի տարանցիկ կէտին վրայ իրենց բեռներուն մէկ մասը գրաւուած է:

Ընկերութեան տուեալներով ապրանքները գրաւուած են, որովհետեւ անոնք Նախատեսուած էին հայկական մակաւորներով անձերու կամ հայերու պատկանող ընկերութիւններու համար: Բացի ատկէ, փոխադրողը նշած է, որ այս օրէնքը որդեգրուած է 1 սեպտեմբերին՝ առանց որեւէ Նախագուշակման, եւ մեծ քանակութեամբ բեռ ուղարկուելով տեղ պիտի հասնի:

Յայտարարութեան մէջ նաեւ կը նշուի, որ ընկերութիւնը ստիպուած է յորդորել, որ ապագային ապրանքներու եւ ծանրոցներու վրայ հայկական անուններ չգրուին: Պաքոյի այս վարմունքը ազգայնամոլութեան եւ հայատեացութեան ծայրայէտ դրսեւորում է: Ազրպէյճանական իշխանութիւններուն վարմունքը նաեւ անընդունելի է այն տեսանկիւնէն, որ խօսքը արդէն ո'չ միայն Հայաստանի քաղաքացիներու, այլ նաեւ Կրաստանի հայկական ծագումով քաղաքացիներու իրաւունքներուն մասին է:

www.afhil.com

Advertisement for AFHIL (Armenian Mutual Fund) celebrating 20 years of commitment. It lists various insurance and investment services like Health Insurance, Travel Insurance, GoodCare Clinic, Car Insurance, Health Clubs, Home Medical Equipment, BOB - Western Union, University and Student Fund, and «911» Health Magazine. Contact info: www.afhil.com, Boursj Hammoud, Arin Center, 4th Floor, Tel. 01 242 5567.